# 4. ԾԱՄԾՈՒՆ

Կէլնի մեյ թակավոր, իրեքյ պղա կունենա:

Կպիսնա որ ուր իրեքյ պղի աչքն էլ ուր ախպոր աղչըկան: Կասի. «Խո էսա մեկ աղչիկ իրեքյին էլ կնիկ չէլնի: Կանչեմ իմ պղեյներայ, ճամխեմ ուրիշ երկըրներ, ո՛րն որ ըսկուն պամ' իպե, որ իմ թակավորութնի մեչ չկընղըվի, էն աղչիյ կուպամ ինոր»:

Կանչեց ուր պղեյներայ, ասաց. - Կընաւցեքյ, երկրե-երկիր կան իկեքյ, ծե մեյ պարի էլ մեռհլաթ, որն որ ըսկուն պան իպե, որ մեր երկրի մեչ չկընղըվի, ես իմ ախպոր աղչիկ կուպամ ինոր:

Տղեյներ որ լսան, ուրախցան, էլա̈ն մե մեկ ուր պապրասպութեն պեսան, ինգյան ճամբա̈խ: Շապ կընային, թե քիչ, ճամբա̈խն էլա̈վ իրեքյ ճող:

Ճեռչ ախպերն ասաց՝ ես էսա ճա̈մխով կէրթամ: Օրթանչին մեյ ճա̈մբա̈խ պըռնեց, պսպիյն էլ մեկ ճա̈մբա̈խ պըռնեց: Քարըմ պնգյեցին էպա ճամխի վերեն, պայման արիցին, որ պաքիմ թըմըմի, գյան էպա պեղ, մեյ մըկու կընդընեն: Որըն շո'գյա, էն մեկելներայ աչկի:

Մեյմըկու իրես պաքյիցին, ինգյան ճամբա̈խ, կընային:

Կընա̈յին երկրե-երկիր կան էկան: Ճեռչ ախպեր կէրթա̈ մեյ քյաղաքյ, կպիսնա որ դա̈լա̈լըմ խալիմ թա̈լե վեր թիվին, կծախի, պսպիյ պա̈մ'ի, ջեռրեով իրեքյ մարթ կառնի վերեն:

Դա̈լըլին կխառցուցի. - Ի՞նչ պամ իպոք:

Կասի. - Խա̈զա̈ր ոսկի:

Կասի. - Ընչի՞, իսոր արժեքն ընչի՞ պիպի ըպըսկընեմ' էլնի:

Կասի. - Իսոր մարիֆաթ շապ ի: Վով որ նսպի իսոր վերեն, ուր ուզած պեղ կպանի ինոր:

Դա̈լըլի խեպ մեյպեղ կնսպեն վեր խալուն, կվործա̈ն: Կպիսնա որ ա̈ղորթ ի, խա̈զա̈ր ոսկին կուպա, խալին կառնի:

Օրթանջի ախպեր կէրթա̈ ուրիշ թակավրում փան մեչ կմփնի: Թակավոր կպիրի, իսոր կանի բաղվանչի:

Թակավոր կփիսնա որ շա' խորոփ իգյի կպախի, կպիրի իսոր մեյ խափ անմախութնի խնճոր կուփա աղիե:

Պսփիկ ախպեր կէրթա ուրիշ երկիրըմ, այնաչու մոփ, կէլնի աշկեոփ:

Տարին որ կթըմըմի, չանգյ այնաչին խորոփ այնա կշինի:

Այնաչին կփիսնա որ էսա փղեն շափ աչքպայ ի. կպիրի այնեմ' կուփա իսոր:

Տարին որ կթըմըմի, լաճ ուսթին կայ պարեով կանի, կինի ճամբախ:

Ուսթեն կանչի լաճուն, կասի. - Բալա՛մ, էն այնեն որ ես փվի քյե, կիփե՞ս ինոր մարիֆաթն ի՞նչ ի: Ինոր մարիֆաթն էն ի որ, ինչ որ պոնես մեչ մփքիփ, ինոր մեչ կերևա:

Տղեն կինի ճամբախ, շափ կուգյա, թե քիչ, մեկ օր բիրդան խորոխպոր աղչիյ կինի միփ:

Այնեն կխանի, կիրիշկի, կփիսնա, որ ի՞նչ. խորոխպոր աղչիյ գյեռ մեռե, կիյեփեր թափեր ին կող պյուլոր, կուլան որ քյե ի՞նչ պիփի:

Ինքյն էլ ծիուց կէճնի փակ, կնսփի խանքըմ կուլա, «էյ վա՜խ» քյաշելեն կէլնի ծին կխեծնի, կինի ճամբախ:

Կէրթա ուրենց պայման արած փեղ: Ախպերներ կկընդընի: Կուրախնան վեր մեյմըկու, կնսփեն խայ: Աման ուրենց պիրած մեյմըկու չեն ասի:

Պսփիկ ախպեր կասի. - Մեր էսա մեյ փարվան աշխափութեն կընայ հեչընա:

Կասեն. - Ջանըմ, ընչի՞, ի՞նչ էլեր՝ ի:

Կասի. - Մեր խորոխպոր աղչիյ մեռեր ի:

Ճեռչ ախպեր որ կլսի, կպարկանա, կուզի զանի պսփիկ ախպոր ըսպանի, թե փյու սութ կասես:

Պսփիկ ախպեր կխանի այնեն, կասի. - Ախպերներ, եկեք իբիշկայեքյ, որ չասեքյ թե սութ կասի:

Այնեն կիրիշկեն ախպերներ, կփիսնան որ ուրենց խորոխպոր աղչիկ մեռեր ի, կիհփեր թափեր են կող պյուլյոր, կուլան: Իփոնք էլ նսփեն էն փեղ, կուլա̈ն:

Օրթանջին կասի. - Լա̈լ ֆայդա չանի: Թա̈յլա̈ խավքըմ էլներ ըսփեղ, ես զի թա̈լի վեր ինոր թեեքայ, զի փաներ, խաասուցեր մեր փուն, քանի իմ խորոխպոր աղչիկ չեն թաղե, ես էսա անմախութնի խնձեյոր փի ինոր քթին, էն հա̈րեր:

Ճեռչ կփիսնա, որ միճնեկ ախպոր մոփ էփա մա̈րիֆա̈թ կա, կասի. - էլեքյ, շոփ նսփեքյ վեր իմ խալուն, էրթա̈նքյ:

Կփռի խալին, կնստեն վերեն, կասի. - Խալի, մե տար մեր տուն:
Աչկեր խփեն պանան, կխասնեն:
Միճնեկ ախպեր խնձեյոր կուտա աղչըկան քըթին, աղչիկ կխարի:
Լաճու խեր որ կտիսնա միճնեկ տղի մարիֆաթ, կասի. - Իմ ախպոր աղչիկ միճնեկ տղին կվելի:
Ճեռչ ախպեր կասի. - Ջանըմ, որ իմ խալին չէլներ, ինչը՞խ կուգյին:
Պստիյն էլ կասի. - Ապա որ իմ այնեն չէլներ, տյուքյ ինչըխ կուգյիք:
Կասեն, կբաշլայեն կըռվել: Խեր կշիվարի, կմնա:
Մըկա էտա խեքաթ լըսողներ վի՞ր պիտի կարար տան, որ ես բաշլայեմ իմ խեքաւթն ասել:
Խեր կտիսնա, որ ճար չըկա, կպիրի տղեյներեց կխանի դյուզ տւաշտիմ վերեն, կասի. - Նետ թալեք, վուրուն որ զատ կընաւց, ես էն աղչիկ կուտամ ինոր:
Ճեռչըն կթալի, միճնեյն էլ կթալի, պստիյն էլ կթալի:
Կէրթան էրկըսի նետեր կկըննըննեն, պստըկին չեն կըննի:
Էտա պան կէլնի պստիկին ավքար:
Ըսդեխ կինի, էնդեխ կինի, ուր նետ կփընտըռի, ուր նետ չըկա: Դըհա կզատանա, -սարերաց մեչ կփըտըռտի, քյարերաց մեչ կփըտըռտի, տիսնա մեյ խա' եղնիկըմ կփախնի: Կինի իտև, որ էտա եղնըկին զանի: Եղնիկ քյարե-քյար կթռնի, ծեռրե-ծեռր կթռնի, չում կէրթա ծովերաց մեր թակուհու հէրի տռան առաճ:
Խետ էրթալուն կինի թակուհու գյիրկ, կասի. - Քյո ուզածն էսա էր, որ պիրեցի:
Թակուհին կէրթա առաճ, պաւրև կուտա, կառնի կտանի ուր հ'էր: Կէլնեն իրիկ կնիկ:
Ինն ամսից սորա իսոնց լաճ տղեմ կէլնի: Տղեն էլնելուց ինն օրից վերճ կբաշլայի տղի պեննեն պեռց թալել տյուս:
Մեր կասի. - Արե մեր տղեն տանենք հանձնենքյ Աարերաց մոր, թող մեր տղեն շախի:
Կառնեն կտանեն մեկ ճեռչ սարի մը մեչ, ծառն պերան, քարի ճըղքյի մեչ կտնեն, թռնեն կուգյան:
Խեր որ կտիսնա էսա պան, կբաշլայի սիրտ մըմըռալ, ամա՜ն, ի՞նչխ անի, ուր ծեռ ճար չըկա:
Կէլնեն կուգյան տուն: Լաճն ի, կէրթա ավ անել իրիյվե իրիկուն ինչ որ ինի ծեռ, կպիրեն կուտեն:
Թակավոր կտիսնա, որ ուր պստիյ տղեն չըկա, երկրե-երկիր մարթ կխանի: Դեոր որ կփընտըռեն, մարթ չեն կանա կնդընե:
Տղեն իսկի մըտեն չի խանե ուր լաճն: Տարուց վերճ կասի. «Մեյ

խափ էրթամ խենքյ իմ լաճ մեռե՞ր ի, սա՞ղ ի, խենքյ ի՞նչ նմուշ ի»:

Կէրթա կփիսնա: Տիսնա որ ուր փղեն պեփայե: Ուր փղի պառկած փեղն էլ կանա՞՞չ, խազարագյեռն ծաղկըներ, անու՞շ խընգյան խոփեր կուգյա:

Տղեն անու՞՞շ քյնով քյներ ի էփա կանչըներուը վերեն:

Փառք կուփա ասփըծուն, կփառնա կուգյա:

Տղեն էփա փեղ կճեռճանա: Որ կէլնի յոթ-ութ փարեկան, Ծովերուը մեր կէրթա ուր փղեն էնփեղից կառնի, կփանի, կուփա Տէր-Ղոնղիոսին, որ կրթի:

Տղեն ի, Տէր-Ղոնղիոսի ծեռաը փակ կկրթվի, փաս կառնի, աշխըրի մեչ եըմեն պան կառվրի, դներաը գյեշութեն կլսի, չար-պարին կիմնա:

Կէլնի, որ փառնա գյա ուր փուն:

Էն զախ Տէր-Ղոնղիոս, որ սարերաը, ծովերաը ասփվածն էր, Ծովերաը մեր՝ թակուխու խաթրին կփչի վեր էփա փղեն, կասի. - Կուփամ իմ վոժ, իմ կարողութեն քյե, որ խե վիր կըռվես, կփրիճ փյուս գյաս:

Սարե-սար, ծեռրե-ծեռր կընյնի կխասնի մե ճեռչ մեշի մեչ, կփիսնա մեյ ճեռ՞չ մարթում ոփաը փեղ: Կասի. «Էսա ի՞նչ ճեռչ մարթմ'ի, ես պիփի էրթամ էսա մարթ փընփըռեմ, կընղընեմ»:

Կինի իփոր դավսի խեփ, շափ կէրթա, թե՝ քիչ, մեկ դևու մը ռասփ կուգյա: Էփա դևու անուն էլ Պակ-Պակ դև կասեն:

Դև որ փղեն կփիսնա, ուրախութնե կծռի: Կասի. «Փորըս շափ անութի էր, շոփռնը էլ կեր, որ ես իսանի միս չի կիրե: Աղեկ ըռասփ էկավ: Զում ես էսա ուփեմ, մարսեմ, նոր էն մեկել Ծամծուն խըսկան կմեռնի, կէրթամ կուփեմ»:

Դև ուր կթալի փռի վերեն, որ ինոր ուփի, փըղեն քաշի թուր. կթալի դևու ճայփի մեչ, դևուն կանի էրկու կըփոր:

Տըղեն էլըմ էն ճեռչ ուրաը փեղ կպըռնի կէրթա: Շափ կէրթա, թե քիչ, կէրթա կխասնի քյեռշկ սարի մը մոփ:

Կմփնի ներս, կփիսնա որ էփա ճեռ՞չ մարթ պառկեր ի, ծանդըրըմ կփըքյա, կնիյ նսփե գյլխու վերև, կուլա, ծին էլ կայներ ի ուրաը փայ, կուլա:

- Պարեռվ քյե, - կասի:

Էփա ճեռչ մարթ կփիսնա, որ խողածինըմ իկե խասե մոփ ինքյ. կասի. - Է՞յ, խողածի՛ն, օյն ուր պորփով, խավքյն ուր թիվով ըսփեղրանք չէր իսկըծե, փյու ի՞նչըխ էկար, յախոթ ինչը՞խ Պակ-Պակ դև քյե ըռասփ չէկավ, քյե պան չարաը: Ա՞խ, մե խա ժրի էրթի Պակ-Պակ դևուը իմ վոխըն առնի:

Տղեն կասի. - Ես Պակ-Պակ դևուն ըսպաներ եմ:

Ծամծուն կասի. - Որ որն էլ էրթա իմ խնամու՝ Սի-Սի դևու մոտ, պատմի իմ եղելութեն, ես իմ թուր ինոր կուտամ: Դևերայ խեքիմն էն ի, էն ճար կանի յարեեփերայ:

Տղեն կվիրույի կասի. - Վայլա՛, ես ճամբախ չեմ կիտե, զի նշանց տվեքյ ճամրախ, ես էրթամ:

Կէլնեն ճամբախ նշանց կուտան, կխեծնի Ծամծունի ծին, սարե-սար կէրթա, քյարե-քյար կէրթա, կէրթա չում կխասնի Սի-Սի դևու մոտ:

Ծամծունի եղելութեն կպատմի Սի-Սի դևուն (Սի-Սի դև կնիկ էր), կասի. - Ի սեր ասպըծու, ճարմ արա, Ծամծուն խեղճ ի:

Կասի. - Վա՛խ, խոգյիս էլնե՛ր, եըմեն տեղեր կա, մեյ սև վիշապի տալաղ կպակսի:

Տղեն կասի. - Վիշապի տեղ նշանց տու, ես էրթամ պիրեմ:

Կասի. - Կէրթաս էնա սարի իտև, պախկվես քյարիմ' տակ, չում կեսավուր գյախ, վիշապ կէրթա ճյուր խմել, կըսպանես վիշապ, տալաղ կառնես կուգյաս: Ամա՛ն, վիշապին ըսպանած ժամանակ, քյո աչ ծեռնով զանես:

Տղեն կէրթա սար, կպախկըվի քարի մը տակ, չում վիշապ կէրթա ճյուր խմելու: Կըսպանի վիշապին աչ ծեռնով, տալաղ կառնի կուգյա: Կպիրի Սի-Սի դևուն: Դևն տեղեր կշինի, կուտա տղին, կասի. - Տար, քսի վեր ինոր յարեեփերայ, կծրի:

Տղեն էլ կառնի կուգյա կքսի Ծամծունի յարեեփերայ վերեն, Ծամծուն կծրի, կէլնեն ախպեր:

Կէլնեն էրկուս մեյպըրա կէրթան: Շատ, քիչ ասպված կիտի, դևերայ ըսպանելով, կռվելով, կէրթան չում կխասնեն Նինա թակավըրու էրկիր:

Նինա թակավըրուն մեյ խատ աղչիկըմ կեր, որ ըսկուն խորոտ էր, որ դյունեի մեչ ինոր նըմուշիկ չէր կընդվի:

Ծամծուն կասի. - Ես էսա աղչիկ պիտի պիրեմ քյե, քյո աղեկութենիկ էլնելու խամար:

Կէրթան պառվում' տուն կմտնեն:

Շատ կմնան էն տեղ, թե քիչ, մեկ օր կխառըսուցեն պառվուն, թե. - Ծեր էրկրի վիճակ մեյ խա'մե պատմի, ի՞նչխ անենք, - կասի, - ծեր թակավըրու աղչիկ կանա՞նք տանե:

Պառավ կասի. - Մեր թակավըրու աղչիկ ծե պես մարթ կփընտըռի, որ փախնի ուր խոր ծեռնիկ ազատվի:

Կասեն. - Ջանը՛մ, ընչի՞, ինոր խեր ինչպե՞ս մարթ ի:

Կասի. - Ինոր խեր ըսկուն մարթ ի, որ ինոր աչիչ կոպեր վերյուցող տըսվերկու մըզրըղավոր են: Վիր վերեն որ իրիշկե, էն մարթ կխայի:

- Է՜յ, պառա՛վ, էտա աղչըկսւն մոտ վո՞վ կանա էրթա-գյա:

Կասի. - Ծե մեռնեմ, մեկ ես կէրթամ, կուգյամ:

- Էլի, պառավ, կնա մո թակավրու աղչիկ. ասա՝ ըսկընա էրկու խա' մարթ կան, իկեր են քյե կուզեն, ի՞նչ կասես, խոսք կուտա՞ս. թե չէ:

Պառավ կէլնի կէրթա էտա աղչկա մոտ, կասի ինոր. - Էրկու խա' մարթ են էկե, քյե կուզեն, ի՞նչ կասես, խոսք կուտա՞ս:

- Թե որ Ծամծուն ի, խոսք կուտամ, թե չէ՝ ուրիշ էլնի, խոսք չեմ իտա:

Պառավ կուգյա կիմնա որ Ծամծուն ի, կէրթա աղչըկան կասի:

Աղչիկ խոսք կուտա: Կէլնեն ուրենց պատրաստութեն կտիսնան, կառնեն աղչիյն, կփախնեն:

Խեր որ կ՚սի, կառնի ուր զորքեր, կինի իտոնց իտև: Իտոնք չկիտնալով թե խեր կուգյա, կուգյան կխասնեն գյետի պերան, կպառկեն կքյնեն:

Աղչիյ մեկեն կարթըննա, տիսնա որ, էրկնուց ւաստղերաց խսար կա, ուր խոր աքըրին խսաբ չըկա:

Ծեն կուտա Ծամծունին, տղին, որ էլնեն փախնեն:

Տղեն կասի. - Չեմ փախնե, ես պիտի քյո խոր խետ կռիվ անեմ:

Կառնի ուր նետվանեղ ինսւն Ծամծունի թուր, կէրթա խե թակավրուն կռիվի:

Նինե թակավրու աքըրներ որ կտիսնան, տղե մը կուգյա ուրենց տիմաց կռվելու, թակավրուն կասեն:

Թակավոր կասի. - Իմ աչկեր պայեքյ, մեյ խապ իրիշկամ խենքյ փու՞վ ի:

Չում տըսվերկու մըզրըղավորներ թակավրու աչկեր կպանան, տղեն նետ կզանի, խետ զանելուն՝ թակավրու աչկեր գյլխու իտևանց կխանի տյուս:

Նինե թակավոր կմեռնի, ինքյ թուր կառնի, կինի մեչ աքըրին, աչից կպրղի, ծախից կպրղի, չում իըմեն էլ կխըլըսցույի: Տառնա կուգյա մո Ծամծուն, կառնի Ծամծուն, կտանի տնի վեր Նինե թակավրու թախտին:

Ինքյ կառնի աղչիկ, կէրթա:

Շատ կէրթան թե քիչ, աղչիկ կասի. - Աղա՛, մենքյ որ խասանքյ քո մոր մոտ, ես ի՞նչ սւղիե տամ ինոր:

Կասի. - Ասպըված օղորմած ի, ախա՜ր ճամրախ պամ կանանք կընղընե:

Ինոնք ուրենց ճամրախ կէրթան: Կտիսնան, որ իրեքյ խա' դև սարիմ իտև քյարված չըլղեր ին, նստեր են ակնունք, ջավաիրներ կկիսեն վեր ուրենց:

Տղեն կէրթա էտա դևերայ կապանի. կառնի ակնունք, ջավահիրներ, մեյ դևի գյլեոխ, խե քարվընի մարթերայ կէրթան:
Շատ քիչ կէրթան, կխասնեն ուրենց խոր-մոր մոտ: Մեր որ կփիսնա տղի կտրճութեն, ինոր՝ ուր խամար խարս պիրել, կխասնի տղի ճակատ կպաքյի, կառնի ուր խարսին, կտանի տուն:
Նոր կբաշլայեն խարսնիս անել: Ինոնք կխասնեն ուրենց մուրազին: